# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<16>> հուլիսի 2020թ. N ՄՂ/305 - 2020

ք. Արմավիր

**<<ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Վարդան Հակոբյանի 2020 թվականի հուլիսի 14-ի դիմումը.

**որոշում եմ՝**

1. <<Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդան Հակոբյանին տրամադրել 2020 թվականի ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2020 թվականի հուլիսի 16-ից օգոստոսի 19-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Վարդան Հակոբյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Գարան Պապոյանին:
3. Վարդան Հակոբյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվականի օգոստոսի 20-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 16.07.2020 17:49:54 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230